# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 Հոկտեմբերի 2019 թ.
№ 12 (1046)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ԵՐԴՎՈՒՄ ԵՆՔ, ՈՒՍՈՒՑՉԱՊԵ՛Տ

Մանկավարժական համալսարանի առաջին կուրսերի ուսանողները Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում մասնակցեցին երդման ավանդական դարձած միջոցառմանը:

Տոնական գունեղ փուչիկներով, կարգախոսներով և բարձր տրամադրությամբ էր լցվել մեծ լուսավորչի խորհուրդներն իր մեջ ամփոփող տան բակը, իսկ ուսանողներին շնորհավորելու էին եկել բուհի ղեկավարությունը, դասախոսներ և հյուրեր:

Առաջին կուրսեցիներին շնորհավորեց համալսարան ընդունվելու կապակցությամբ և հաջողություններ մաղթեց ՀՊՄՀ ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը «Հայր մեր» աղոթքով սկսեց իր օրհնության խոսքը:

«Արդեն քանի տարի ինձ բախտ է վիճակվում շնորհավորել ձեզ ավանդական դարձած այս տոնի առթիվ, ամեն տարի՝ որպես եկեղեցականի և որպես համալսարանականի, ինձ ապշեցնում է Մանկավարժական համալսարանի կազմակերպվածությունը և այս հրաշալի առաջին կուրսեցիների ոգևորված հայացքները. այսպիսի ոգևորվածությունը փոխանցվում է նաև մեզ:

Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, դուք ընդունվել եք լավագույն բուհերից մեկը, եթե ոչ ամենից լավագույնը, և վստահ եմ, որ ապագայում դուք դառնալու եք հրաշալի մանկավարժներ, երբ ավարտեք բուհը և լծվեք մանկավարժի առաքելությանը»:

Նա Վեհափառ Հայրապետի անունից շնորհավորեց ուսանողներին համալսարան ընդունվելու կապակցությամբ՝ մաղթելով, որ ուսումնառության ընթացքը լինի արդյունավետ:

«Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տարին հռչակել է ավանդական ընտանիքի տարի. դա շատ խորհրդանշական է, եթե հաշվի առնենք ստամբուլյան կոնվեցիայի մերօրյա մարտահրավերները: Իբրև երիտասարդներ, ապագա ծնողներ և մանկավարժներ՝ դուք ճիշտ կողմնորոշում պիտի ունենաք ընտանիքի ձևավորման հարցում և ձեր ավանդապահ ու հարուստ գի-

➢2

## ԲԱՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մանկավարժական համալսարանում բաց քննարկման ներկայացվեց «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միհր Մելիք-Բախշյանը հանգամանորեն ներկայացրեց օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները՝ ընդգծելով տարբեր հոդվածներում առկա թերություններն ու բացթողումները՝ կրկնություններ, հակասություններ, հստակեցնելու ենթակա ձևակերպումներ: Պրոռեկտորի նկատառումները բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններին վերաբերող հատվածում տեղ գտած բացթողումների, բուհի կառավարման խորհրդի ձևավորման, գիտական խորհրդի, դեկանների նշանակման, առցանց ուսուցման չհստակեցված ձևակերպումների և այլ հարցերի մասին էր:

Միհր Մելիք-Բախշյանը նկատեց, որ ակադեմիական ազնվության մասին նախագծում չկա որևէ դրույթ, հոդված, դեկաններին էլ պետք է նշանակի ռեկտորը, ըստ նախագծի: Մինչ այժմ դեկանի պաշտոնը ընտրովի է, որն ավելի ժողովրդավարական և օբյեկտիվ մոտեցում է: Պրոռեկտորը շեշտեց որոշ դրույթների հակասությունը ՀՀ լեզվի մասին և այլ օրենքներին, ապա հավելեց՝ ներկա նախագիծը ենթադրում է մի շարք այլ օրենքների լրամշակում, հակառակ դեպքում հակասություններն անխուսափելի կլինեն:

Օրինագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ իր նկատառումներն ու առաջարկությունները ներկայացրեց նաև ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը: Նա փաստեց, որ նախագծի «Ընդհանուր դրույթներ» բաժնում ներկայացված «Օրենքի կարգավորման առարկան և նպատակը» թերի է, նրա կարծիքով՝ նպատակը պետք է լինի ավելի ընդհանրացված և ընդգրկուն: Պրոռեկտորը խոսեց նաև ակադեմիական ազնվության՝ որպես բուհի կարևորագույն բաղադրիչներից մեկի մասին, ինչը որևէ կերպ արտացոլված չէ նախագծում: Միաժամանակ, ներառված չէ «դիպլոմավորված մասնագետ» եզրույթը՝ հետագայում թյուրիմացություններից խուսափելու համար, հեռավար ուսուցման ձևակերպումը հստակեցման կարիք ունի, չեն նշված դրա իրականացման մեխանիզմները, «մասնավոր ուսումնական հաստատությունները» պետք է փոխարինել «ոչ պետական» ձևակերպումով: Անձնական տվյալների հավաքագրմանը վերաբերող հատվածի ձևակերպումը

➢2

# ԵՐԴՎՈՒՄ ԵՆՔ, ՈՒՍՈՒՑՉԱՊԵ՛Տ

➢1 տելիքները փոխանցեք ձեր զավակներին և սաներին: Ձեզանից է կախված, թե ինչպիսին եք ուզում տեսնել ձեր ապագա ընտանիքները՝ հայկական, ավանդական և ամուր: Եթե ընտանիքն ամուր է՝ ամուր է նաև բանակը, եթե բանակն ամուր է՝ ամուր է նաև սահմանը, և մեր զավակները խաղաղ երկնքի տակ կապրեն:

Բարի երթ դեպի գիտելիքը, դեպի գիտությունը և դեպի կյանքը»,-ամփոփեց Գերաշնորհ Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Առաջին կուրսեցիներին բարեմաղթանքի խոսք հղեց Լեզվի պետական կոմիտեի նախագահ, ՀՊՄՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Դավիթ Գյուրջինյանը: Դիմելով առաջին կուրսեցիներին՝ Դ. Գյուրջինյանն ասաց. «Ավ. Իսահակյանը մի առիթով ասել է, որ հայոց ոգին իր ամենավառ արտահայտությունն ունեցել է չորս գրքերում, որոնք են՝ Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», Եղիշեի «Վասն Վարդանա և հայոց պատերազմին», Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթամատյանը և Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն:

Մենք հիմա գտնվում ենք «Վերք»-ի հեղինակի տանը, նրա տիրույթում, և դուք ընդունվել եք Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, ընդունվել եք՝ ավարտելով անկախության շրջանում ձևավորված ազգային դպրոցը…:

…Կարդացեք այդ գրքերը և առեք ձեր մեջ հայրենասիրական ոգի, նվիրում, կարողացեք Նարեկացու նման նայել ձեր ներսը: Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը ձեզ լավ կրթություն կտա, կսովորեցնի՝ ինչպես սովորել, բայց դուք պիտի դա անեք՝ ամբնդհատ ձեր ներսը նայելով, ինքնակատարելագործվելով և Աբովյանի նման մշտապես նորը փնտրելով, հետո մտնեք դպրոց և ավանդեք»,- ասաց Դ. Գյուրջինյանը:

«Ինչ էլ ավանդեք աշխատեք, որ ձեր շուրթերից հնչող հայերենը օրինակելի լինի, և այս տարիները իզուր չանցկացնեք»,- ամփոփեց Դ. Գյուրջինյանը:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանը շնորհավորեց առաջին կուրսեցիներին՝ հորդորելով սրբորեն պահել հայ մշակույթը, որովհետև մշակույթն է պահում ժողովրդին, բանակն ու սահմանը., «Փա՜ռք մեր բանակին, որն ամուր է պահում մեր սահմանները, բայց մեր հայրենիքն ունի նաև հոգևոր սահմաններ, որոնք կարծես թե անպաշտպան են մնացել արևմտյան արժեքների ու համացանցի առաջ: Պետք է երեխաների աշխարհը լցնել մեր հոգևոր մշակույթով, որովհետև առանց հոգևոր սահմանի չի կարող լինել ֆիզիկական սահման: Սերունդներին դաստիարակեք հոգևոր մշակույթով»:

Առաջին կուրսեցիներին հաջողություններ և կանաչ ճանապարհ մաղթեց ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի ամբիոնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արա Գևորգյանը. «Եղեք ավելի ուշադիր և զգոն ձեր ապագայի հանդեպ, որ կարողանաք սովորեցնել ձեր սաներին»:

Համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանն ուսանողներին դիմելով՝ ասաց. «Մենք՝ ձեր դասախոսները, ուսուցիչներ ենք և դասավանդում ենք ապագա ուսուցիչներին»:

Ռեկտորը ապագա ուսուցիչներին հորդորեց՝ հավատարիմ մնալ չորս պատգամի. «Մայրենի լեզուն սովորեք և պահպանեք, ինչ առարկա էլ դասավանդելու լինեք, ուսումնասիրեք և պահպանեք հայ ժողովրդի պատմությունը, հպարտացեք նրանով, հավատարիմ եղեք քրիստոնեական ավանդույթներին, հայ եկեղեցին մեզ պահող կարևորագույն հաստատությունն է, պատմության բոլոր դեգերումների ընթացքում մեզ ուժ է տվել հայկական ընտանիքը, սիրեք և հարգեք ձեր ընտանիքները և ծնողներին, որ ձեր զավակներն էլ ձեզ սիրեն»:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի Հռիփսիմե Բաղալյանն ընթերցեց առաջին կուրսեցիների երդման խոսքը, «Երդվում ենք դպրության շեմից ներս մտնելուց առաջ ունկնդիր լինել դարերի կանչին»՝ արձագանքեցին ուսանողները:

Օրն ամփոփվեց համերգային ծրագրով:

# ԲԱՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ

➢1 նպատակահարմար գտավ համապատասխանեցնել ՀՀ Սամանադրությանը: Ինչ վերաբերում է «գիտական գործունեության արդյունքների առևտրայնացմանը»՝ այստեղ պետք է ներկայացնել արժեքի սահմանումը, թերի են «արտաքին և ներքին որակի» ձևակերպումները, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային վերաբերող մասը խմբագրման կարիք ունի, իսկ որ ամենակարևորն է, ՀՀ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի նպատակների մեջ պետք է հատուկ նշել ազգային կրթությամբ մասնագետների պատրաստման մասին, ինչը բացակայում է:

Օրենքի նախագծում ներառված ֆինանսական ձևակերպումների շուրջ իր մտահոգությունները ներկայացրեց նաև համալսարանի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արմեն Թամազյանը

Քննարկման մասնակիցները ներկայացրին իրենց մտահոգությունները, նաև հանդես եկան առաջարկություններով:

«Բնական է, որ օրենքները պետք է անընդհատ նորացվեն, բայց դրանք պետք է բխեն ազգային շահերից»,-ասաց պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, պնդելով, որ Հայոց լեզուն, Հայ գրականությունը և Հայոց պատմությունը բուհերում պետք է լինեն պարտադիր առարկաներ:

Պրոֆեսորն իր մտահոգությունը հայտնեց նաև պրոֆեսորադասախոսական կազմի, գիտնականների աշխատանքի տարիքային սահմանափակման մասին՝ հիշեցնելով տարբեր երկրներում այդ տարիքի գիտական ներուժի հանդեպ հատուկ վերաբերմունքը: Տարիքային սահմանափակումը աշխատող մարդու իրավունքի ոտնահարում է:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դոլուխանյանը ճիշտ չի համարում նաև գիտությունների թեկնածուին և դոկտորի աստիճանի աստիճանի արհեստական հավասարեցման հանգամանքը. «դոկտորները օր ու գիշեր աշխատում են, մեծ նորություն են բերում գիտության մեջ, հետևաբար գիտական երկու աստիճանների հավասարեցումը կբերի նրան, որ կկորցնենք մեր գիտական ողջ ներուժը»,- ասաց նա:

Բազմաթիվ ձեռնարկների, մենագրությունների հեղինակ պրոֆեսոր Համլետ Միքայելյանը բավականին խիստ քննադատեց նախագծում բուհի կառավարման խորհրդի ձևավորման և դասախոսի տարիքային սահմանափակման ձևակերպումները: «Այսօր բոլորից շատ հենց թոշակառուները սոցիալականացման խնդիր ունեն»,-ասաց ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Միքայելյանն ու ավելացրեց, որ ինքը 63 տարեկանից հետո 9 մենագրություն է գրել:

«Նախագծում նշված է, որ ռեկտորը չի կարող լինել գիտական խորհրդի նախագահ, բուհի կառավարման խորհրդի կազմում բուհից ընդամենը 6 անդամ է ընդգրկվելու այն դեպքում, երբ հենց նրանք են մասնակցում բուհի կառավարմանն ու իրականացնում բուհի գործունեությունը, հենց նրանք են ներկայացնում բարձրագույն ուսումնական հաստատության ռազմավարական ծրագիրը: Իսկ ո՞ւր է ինքնավարությունը, ինչի՞ համար է այդքան միջամտությունը»,- ամփոփեց բանախոսը, վստահեցնելով, որ օրենքի նախագծում բավականին թյուրըմբռնումներ կան, և որ այն շտկելու համար պետք է աշխատի իրավազեկ հանձնաժողով:

Քննարկումն ամփոփեց համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Չխոսելով առանձին դրույթների ու հոդվածների մասին՝ նա անդրադարձավ սկզբունքներին: «Յուրաքանչյուր երկիր ունի կրթական համակարգի իր առանձնահատկությունները, բնականաբար, և ակադեմիական ազատությունը: Պետք է բացառել մերժող հոդվածները, որոնք սահմանափակում են դասավանդող անձին»,- ասաց ռեկտորը:

Նա հստակ արտահայտեց իր վերաբերմունքը՝ պետք է բացառվեն բոլոր տեսակի տարիքային սահմանափակումները, ցանկացած ուսումնական հաստատություն պետք է ունենա հոգաբարձուների խորհուրդ՝ վերահսկելու հիմնականում իր արած ներդրումների՝ ֆինանսական միջոցների ծախսերը, բուհի կառավարման խորհրդի բոլոր անդամներն էլ պետք է հավասար լինեն և այլն:

«Չի կարելի օրենքը հարմարեցնել այս կամ այն հաստատության շահերին՝ ելնելով ղեկավարման նպատակից»,-ամփոփեց բուհի ղեկավարը:

*Սիլվա ԱՍՐՅԱՆ*

ԲՈՒՀ - ԴՊՐՈՑ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԵԿՏՈՐԻ ՀԵՏ. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց բուհի ուսանողների պրակտիկան անցկացնող դպրոցների տնօրենների հետ:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց համագործակցության համար և հույս հայտնեց, որ հանդիպմանը որպես գործընկերներ կքննարկեն պրակտիկայի վերաբերյալ առաջարկները, դիտողություններն ու նկատառումները՝ դրանք վերանայելու, շտկելու և առավել շոշափելի ու դրական արդյունքներ ունենալու համար:

Ռուբեն Միրզախանյանը վերահաստատեց բուհի կողմից պրակտիկան կարևորելու ռազմավարությունը, խոսեց բուհի վերջին ձեռքբերումների, մասնավորապես՝ Web of Science գիտաչափական շտեմարանում «Իմաստություն» հանդեսի ընդգրկման, Մինեստայի համալսարանի հետ համատեղ ներառական կրթության վերաբերյալ առաջին դասագրքի ստեղծման մասին, որն իր անմիջական և շոշափելի արդյունքը կունենա նաև դպրոցներում:

«Արդյունավետ չի լինի ցանկացած միջազգային փորձ, եթե հաշվի չառնենք մեր ազգային առանձնահատկություններն ու իրավիճակը»,-նշեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ու անդրադարձավ նաև բուհում սովորելու ընթացքում գործընկեր համալսարաններում սովորելու, պրակտիկա անցկացնելու հնարավորություններին: Մասնավորապես՝ ռեկտորը խոսեց այս տարի ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի և Ցյուրիխի արվեստների համալսարանի ուսանողների համատեղ պրակտիկայի մասին, երբ հայ և շվեյցարացի ուսանողները փոխադարձ այցերով իրենց պրակտիկան անցկացրին երկու բուհերում:

Դպրոցների տնօրեններն ափսոսանքով են նկատում՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը նկատելիորեն նվազել է, ինչը երբեմն խոչընդոտ է հանդիսանում ուսուցչական կազմը որակյալ մանկավարժներով համալրելու գործում: Տնօրենները հավաստիացնում են՝ ունեն դասվարների, ինֆորմատիկայի, բնագիտամաթեմատիկական առարկաների գծով ուսուցիչների, հոգեբանների և լոգոպեդների թափուր հաստիքներ. պատճառը հիմնականում ցածր աշխատավարձն է:

«Պրակտիկա անցնող ապագա մանկավարժների համար դպրոցում չկան փակ դռներ»,-վստահեցրին դպրոցների տնօրեններն ու խոսելով պրակտիկայի կազմակերպման խնդիրների մասին՝ հետաքրքրվեցին, թե ինչպիսի խնդիրների են հանդիպում ուսանողները և մեթոդիստները դպրոցներում:

Տնօրենները անդրադարձան նաև Մանկավարժականի ուսանողների պատրաստվածությանը և նշեցին, որ որոշ դեպքերում մասնագիտական խորը գիտելիքների կողքին մանկավարժական մեթոդների իմացությունը թույլ է: Հանդիպման ընթացքում տնօրենները առանձնակի կարևորեցին ուսուցիչների վերապատրաստումը Մանկավարժական համալսարանում կազմակերպելու անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա ամրապնդել բուհ-դպրոց հետադարձ կապը: Բացի այդ, առաջարկեցին ՀՊՄՀ-ի հիմնական, ավագ և պրակտիկա անցկացնող դպրոցների հետ համատեղ կազմակերպել ամառային դպրոց-ճամբար, ինչպես նաև հետաքրքրություն դրսևորեցին մասնակցելու բուհում կազմակերպվող կոնֆերանսներին, որի ժամանակ, որպես սկսնակ հետազոտողներ, զեկույցներով հանդես կգան աշակերտները:

Ռեկտորը ևս մեկ անգամ ընդգծեց դպրոցների հետ աշխատելու բուհի պատրաստակամությունը և հույս հայտնեց, որ կշարունակեն երկկողմ արդյունավետ գործակցությունը՝ ի նպաստ աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման, պրակտիկայի բարելավման և դպրոցները որակյալ կադրերով համալրելու գործի:

*Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ*

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՆՇԵՑԻՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԸ.

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԱՊՐԵԼՈՒ ԿԵՐՊՆ Է

Մեր ժողովուրդը զարմանալի իմաստուն կենսակերպ ունի. բոլոր ժամանակներում, դարեր ի վեր կարողացել է դիմակայել մարտահրավերներին՝ իր դպրությամբ, գրով, մշակույթով: Կրթությունը հայ մարդու ապրելու կերպն է, նրա արարող մտքի ու հոգու հարատև ընթացքը...

Ամեն տարի հոկտեմբերի 5-ին նշում են ուսուցիչների մասնագիտական տոնը: Այն հռչակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ 1994 թվականին: 1966թ. այդ օրն էր Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից հրավիրված համատեղ կոնֆերանսում, ընդունվել «Ուսուցչի կարգավիճակի հետ կապված ուղեցույց» փաստաթուղթը, որն էլ դարձել է ուսուցիչների աշխատանքը կարգավորող առաջին միջազգային փաստաթուղթը:

Այսօր արդեն Ուսուցչի տոնը նշում է 100-ից ավելի պետություն: ՄԱԿ-ն այս օրվա առթիվ առաջարկում է բոլորին մի պահ խորհել այն մասին, թե ինչպես է լավ ուսուցիչը փոխել իրենց կյանքը:

Հայաստանում Ուսուցչի օրը մինչև վերջերս նշվում էր հոկտեմբերի առաջին կիրակի օրը: Սակայն խորհրդարանի կողմից ընդունված «ՀՀ տոների ու հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրինագծի համապատասխան, պաշտոնական տոնացույցում ամրագրվեց հոկտեմբերի 5-ը:

## Ես ընտրել եմ դպրոցը

Ողջույն: Ես դասվար եմ, աշխատում եմ Երևանում, ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցում:

Ես ձգտում եմ դիտարկել և հասկանալ երեխայի ներաշխարհը, իմ ամբողջ վարպետությունն ու կենսափորձն ուղղորդել երեխայի տաղանդի և ունակությունների բացահայտմանը, օգնել նրան նկատել սեփական արժանիքներն ու թերությունները, բազմապատկել առաջիններն ու ձերբազատվել երկրորդներից, հնարավորություն ընձեռել երեխային զգալ իր արժեքը՝ անկախ ուսումնական գործունեության մեջ ունեցած առաջընթացից:

Ես ընտրել եմ դպրոցը, որովհետև սիրում եմ երեխաներին: Ես շարունակում եմ սովորել և սովորեցնել:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՄԵՐ ՏՈՆԸ:

*Կարինե Չիբուխչյան*
*ՀՊՄՀ հիմնական դպրոց*

## Ուսուցիչը լույսի ակունք է

Ո՞վ է ուսուցիչը: Հարց, որ ամեն անգամ բարձրաձայնում ենք ու փորձում վերարժևորել այս մասնագիտությունը կրող անձանց, որոնք սերունդներ են կրթում, նորովի դաստիարակում:

Բայց ժամանակնե՞րն են փոխվել գուցե, որ երբեմն թերարժեքության զգացումն է իշխում ուսուցչի հանդեպ:

Իսկ ես ուսուցչին տեսնում եմ ժամանակին համաքայլ, նոր օրերի աշակերտության հետ սիրով շաղկապված, փոխադարձ հասկացվածությամբ:

Ըստ իս, ուսուցչի հաջողության ամենամեծ գրավականը մասնագիտությանը նվիրվելն է: Սակայն մանկավարժ լինելու համար սովորելը դեռևս բավարար չէ: Պետք է կարողանալ այն մատուցել աշակերտներին, մտածել՝ ինչ ձևով և ինչ եղանակով, ապրել նրա հոգսերով՝ և՛ դպրոցական, և՛ ընտանեկան:

Ճիշտ է ասված՝ ժամանակը ոսկի է: Ուսուցչի համար այն առավել ցայտուն է: Կկարողանա՞ս, արդյոք, լինի դասապրոցես, թե արտաժամյա աշխատանք, բավարար հարաբերություններ ստեղծել աշակերտական, ծնողական հանրույթների, ինչպես նաև գործընկերների հետ:

Միևնույն ժամանակ մտածում ես՝ կհասկանա՞ն քեզ, եթե չկարողանաս դիմացինի մոտ ցանկալի ձևով դրսևորվել: Չէ՞ որ ժամանակի խնդիր է փոխադարձ հարաբերությունները բավարար հիմքերի վրա դնելը:

Ես հավատացած եմ, որ ուսուցչի աշխատանքն աննպատակ չի անցնում, աննկատ չի մնում: Ուսուցիչը լույսի ակունք է, և առաջին ու ամենամեծ գնահատական տվողը աշակերտն է:

Մանկավարժ լինել ամեն ինչում, կարողանալ լսել, հարգել, հասկանալ, խրախուսել, հանդուրժել և, ամենից կարևորը՝ սիրել աշակերտներին: Մանկավարժության հիմնարար խնդիրներից մեկն էլ երեխայի հոգին լավ ըմբռնելն է: Եթե սիրենք նրան, կվարձատրվենք նրա շռայլ սիրով: Սեր աշխատանքի նկատմամբ և ինքնակրթություն՝ ահա հաջողության հասնելու գաղտնիքը:

Ամեն մեկիս հաջողությունը բոլորինս է, իսկ ընդհանուր հաջողությունների արդյունքը մեր «թողարկած» շրջանավարտներն են, որոնք կյանք են մտնում անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով զինված և տարբեր բնագավառներում արդարացնում են իրենց: Առանձնապես ուրախալի է, որ նրանց մոտ հարգի է մանկավարժ դառնալու ձգտումը, և նրանցից շատերը ձեռք են բերել արհեստավարժ մանկավարժի համբավ: Դյուրին չէ մանկավարժի աշխատանքը, բայց քաղցր են նրա պտուղները: Իրոք, արժե ուսուցիչ դառնալ, քանզի աշակերտների հարգանքն ու սերը մեղմացնում են բոլոր հոգսերը:

*Լուսինե Բաղդասարյան*
*Երևանի №144 հիմնական դպրոց*
*ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի շրջանավարտ*

## ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԿՈՉՈՒՄ

Իմ կյանքի ժամանակացույցը բաժանվում է 45 րոպեների և նրանց արանքում դասարանից դասարան հասնելու համար՝ 5 րոպեների: Դասամիջոցի զանգը հնչեց: Փակեցի Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն ու հիշեցի... Մոտ քառորդ դար է անցել այն օրից, երբ ուսանողական պրակտիկայի փաստաթղթերով մտա ծննդավայրիս դպրոցն ու... այնտեղ եմ մինչև այսօր: Տնօրենի առաջարկով մնացի դպրոցում դասավանդելու. դպրոցը երկհերթ էր, իսկ ես՝ բանասիրական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողուհի:

Երազանքս լավ լրագրող դառնալն էր, բայց ճակատագիրն ուրիշ ուղի էր ընտրել ինձ համար. ես մտա դպրոց ու հասկացա, որ այնտեղից դուրս գալն անհնար է: Հասկացա, որ ես Մանկավարժականն ավարտելով՝ մասնագիտություն չստացա, այլ կոչում, որը կրելը ծանր է, պատվաբեր ու պատասխանատու: Նկատե՞լ եք՝ արքաների մասին անգամ խոսելիս կարող են անունով խոսել, իսկ ուսուցչին հիշելիս (ինչպիսին էլ նա եղած լինի) ազգանունով են հիշում, այսինքն՝ ի բնե ակնածանք կա, ոչ մի տեղ չարձանագրված, ենթագիտակցության մեջ կնիքված հարգանք:

Երբ դպրոց մտա, իմ աշխատավարձը 2000 դրամ էր ընդամենը: Բայց դա չէր խանգարում, որ ես այդ ցուրտ տարիներին նավթի վառարանի մոտ հավաքեի իմ աշակերտներին ու հավատացնեի՝ «գարունը հայերեն է գալիս», որ Դեմիրճյանը ջութակ է նվագել, որ Մաթևոսյանը գոմում է ծնվել, որ Նարեկացին սուրբ է. մենք տաք ու կուշտ դասամիջոց չունեցանք, բայց ապրեցինք Մահարու լավատեսությամբ:

Սահմանում զինվորն էր, թիկունքում՝ ուսուցիչը: Նրանք չլքեցին իրենց դիրքերը:

Որքան էլ արհեստականորեն փորձում են սասանել ուսուցչի հեղինակությունը, միևնույն է, պետության հիմքի շաղախը ուսուցչի քրտինքով է սրբագործված, դրա համար էլ ամուր է այս պետությունը:

Ես պատվով ու հպարտությամբ եմ կրում իմ կոչումը: Իմ աշակերտներից յուրաքանչյուրի հաղթանակն ու հաջողությունն ինձ ուժ են տալիս, թևեր, աշխատելու նոր ձիրք ու եռանդ: Այս տարի իմ աշակերտուհին ոսկե մեդալ ստացավ՝ գերազանց հանձնելով նաև մայրենիի քննությունը: Սրանից մեծ երջանկություն կա՞ ուսուցչի համար: Օրերս մյուս աշակերտուհիս էպոսասացության մրցույթից հաղթանակով վերադարձավ. սրանից լավ խթա՞ն: Աշակերտիս հետ գրքույկ ենք տպում. սրանից թանկ աշխատա՞նք: Աշակերտներս լրագրողի ու խմբագրի դերի մեջ են. դպրոցական թերթ ենք լույսընծայում. սրանից հետաքրքիր առօրյա՞: Սահմանում ծառայող զինվոր-աշակերտս հիշում է ծննդյանս օրը, ծաղիկներ ուղարկում. սրանից լավ գնահատա՞նք: Սահմանին հիշում են ՈՒՍՈՒՑՉԻՆ, ուրեմն՝ երանելի ենք, չէ՞:

Երանելի՜ են ուսուցիչները, որովհետև արքայից շինական իրենց զավակներին վստահում են նրանց: Նա լա՛վ գիտի իր գործը: Նրա շաղած սերմերը հարուստ բերք են տալիս: Մնում է, որ այգեկութը ճիշտ կազմակերպվի, ու նրա արարած բարիքից իրեն էլ բաժին հասնի. պետությունը տանիք լինի նրան, քանզի ամուր է ուսուցչի թիկունքը. մատաղ սերունդն է նրա թիկունքին:

Պարոնյանն ասում էր. «Անիծեմ՝ վարժապետ ըլլաս...» երանի բոլոր անեծքներն այսպես օրհնյալ լինեն:

Խորենացին չվախեցավ Մաշտոցից հետո ուսուցիչ լինել, Մագիստրոսը հպարտությամբ շարունակեց այդ գործը, Աբովյանը բերեց նոր որակ, Չարենցն ու Բակունցը այրվեցին նաև սերունդ կրթելու ու դաստիարակելու հնոցում ու լույս դարձան գալիքի ճամփին:

Օրհնվե՛ք դուք, որ ձեր կրակով ու լույսով ողողեցիք նաև մեզ:

Վերջակետ եմ դնում. զանգը հնչել է. չպետք է ուշանամ:

***Գայանե Բաղրամյան-Արշակյան***
***Նոր Խարբերդի Հովհ Թլկատինցու անվան թիվ 1 միջն. դպրոց***
***Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի***

## Մոսկվայի «Վերածնունդ» դպրոցում հնչեց ուսումնական տարվա առաջին զանգը

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում հոկտեմբերի 6-ին մեկնարկեց 32-րդ ուսումնական տարին: Ուսումնական տարվա մեկնարկին զուգահեռ նշեցին Ուսուցչի տոնը:

Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր նախկին Լազարյան ճեմարանի, ներկայիս ՀՀ դեսպանության հանդիսությունների մեծ դահլիճում: Հնչեց Հայաստանի Հանրապետության հիմնը, որից հետո սկսվեց պաշտոնական մասը: Ներկաներին ողջունեցին Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի կինը՝ Մերի Տողանյանը և դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանը: Այնուհետև ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին դպրոցի գործունեության տարեկան հաշվետու տեսաժապավենը:

«Վերածնունդ» դպրոցի սաները հաջողությամբ ներկայացրին հագեցած ստեղծագործական ծրագիրը՝ ոգևորությամբ հանդես գալով գրական-երաժշտական և ազգային պարային հետաքրքիր համարներով:

Դպրոցի ուսուցչական կոլեկտիվի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումը հաճելի պահեր պարգևեց բոլորին՝ համախմբելով կրթության ոլորտի հանդեպ պատասխանատվության գաղափարի շուրջ:

## Դու հաջողակ ես, հարկավոր է միայն հավատալ դրան և շարժվել առաջ

Յուրաքանչյուր ոք երազանքներ ունի: Մենք երազում ենք ինչ-որ բանի մասին, պատկերացնում ենք մեր աշխարհն ու ապրում այդ երազանքներով: Ես համոզված եմ, որ երբ սկսում ենք անընդհատ մտածել դրանց մասին, սրտանց ցանկանում և հավատում ենք, որ կկատարվեն, դրանք կատարվում են, դառնում են շատ սպասված իրականություն և ամբողջությամբ փոխում են մեր կյանքը՝ փոխելով նաև մեզ:

Եվ այդպիսի լուսավոր հավատով տարիներ առաջ ոտք դրեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարան, ընդունվեցի Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետը, որից հետո կրթությունս շարունակեցի նույն համալսարանի Մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետում. ստացա մագիստրոսի որակավորում, և իմ առջև բացվեց դեպի դպրոց տանող ճանապարհը:

Դպրոց ընդունվեցի որպես հոգեբան, սիրեցի աշխատանքս, աշակերտներին, ուսուցչական կազմին: Ես շարժվեցի առաջ: Եվ կարիք ունեի ավելիի... Ես նկատել եմ, որ իմ երազանքներն անսպառ են. կատարվում է մեկը, սկսում եմ երազել մեկ ուրիշ երազանքի մասին: Եվ այսպես, ինձ սկսեցին հետաքրքրել կրտսեր դպրոցականները, նրանց աշխուժությունը, ամեն ինչ բացահայտելու, ճանաչելու ցանկությունները: Ուստի մեկ անգամ ևս մասնակցեցի ՀՊՄՀ-ի ընդունելության քննություններին՝ այս անգամ ընտրելով «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունը: Ուզում եմ դառնալ ուսուցիչ, որը կկարողանա հասկանալ աշակերտի հոգին, զարգացնել նրա միտքը, լեզուն, ուսանել ու կրթել բազում մանուկների: Մեր դասերն արդեն սկսվել են: Անչափ հետաքրքիր են բոլոր այն դասընթացները, որոնք մենք ուսումնասիրում ենք: Ես համոզվեցի, որ ճիշտ եմ ընտրել իմ երկրորդ մասնագիտությունը. հոգեբանությունն ինձ կօգնի լավ ուսուցիչ դառնալ:

Իսկապես երազանքներն ունեն կատարվելու հատկություն, երբ միշտ ձգտում ես հասնել նրանց: Դա մի անբացատրելի զգացողություն է, երբ քեզ հետ կատարվում է այն, ինչի մասին երկար ժամանակ երազել ես, այդ պահին դու քեզ զգում ես ամենաերջանիկ մարդը և հասկանում ես, որ չնայած դժվարություններին ու փորձություններին, կյանքը հրաշալի է հենց նրանով, որ երազանքները դառնում են իրականություն:

Երազի՛ր, քանի դեռ ապրում ես:

***Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆ***
***Մագիստրոս 1-ին կուրս***
***Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոց***
***Ուսուցչի օգնական***

Մանուկների աշխարհը բոլոր երկրային, հոգեպարար բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել: Նրանց կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար ու դեռ ավելին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀՈՒ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի նախաձեռնությամբ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի հետ համատեղ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում անցկացվեց հայ մեծանուն բանաստեղծուհի, մեծ հայրենասեր, հրապարակախոս, մանկագիր, թարգմանիչ և հասարակական գործիչ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան:

Ելույթ ունեցան և բանաստեղծուհու գրական ժառանգությունն ու հասարակական գործունեությունն արժևորեցին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը:

«Սիլվա Կապուտիկյանի համար գրելը բերկրանք էր, ոգեկան հորիզոններ որոնելու ուրույն ճանապարհ»,-ասաց Ա. Գալստյանը:

Ելույթ ունեցան և բանաստեղծուհու հետ իրենց փոխշփումներն ու ջերմառատ հուշերը ներկայացրին Հայկական հանրագիտարանի խմբագիր Հովհաննես Այվազյանը և գրող Անուշ Նագգաշյանը:

Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, Կապուտիկյանի տուն-թանգարանի տնօրեն Արմենուհի Դեմիրճյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Հովսեփյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտներ Ռուզան Դոլուխանյանը, Գայանե Մարդյանը, Գայանե Հակոբյանը, Մայա Գրիգորյանը, Դավիթ Գյուլզադյանը:

«Սիլվա Կապուտիկյանն իր ողջ գիտակցական կյանքում որոշակի չափանիշ էր հասարակության համար, մարդ-անհատ, որն իր ընբռնումներով հակադրվեց ժամանակի անարդարություններին, բայց ոչ երբեք քաղաքական անհատներին: Իր կյանքն ինտեգրելով հասարակական կյանքին՝ նա նաև իր ստեղծագործությունների օրինակով փաստեց, որ պոեզիան միշտ էլ հարթում է իր ճանապարհը»:

Ակադեմիկոս Յու. Սուվարյանի սերնդակիցները հիշում են, թե Ս. Կապուտիկյանն ինչպիսի գնահատականներ էր տալիս ժամանակի իշխանավորներին. «Նա չափազանց ակտիվ էր ոչ միայն իբրև գրող, այլ իբրև հասարակական գործիչ: Բանաստեղծուհու հայրենասիրական գործունեությունն իր գագաթնակետին հասավ ղարաբաղյան շարժման ընթացքում: Մինչև իր կյանքի վերջը նա իր ծանրակշիռ խոսքն ասաց որպես հայրենասեր քաղաքացի, որը մտահոգված էր իր երկրի խնդիրներով»:

«Այս օրերին Երևանի պետական համալսարանը նշում է իր հիմնադրման 100-ամյակը. Սիլվա Կապուտիկյանը համալսարանական է և համալսարանի տարեկիցը,-ասաց ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի ակադեմիկոս Հ. Թամրազյանի անվան Հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը:-Կապուտիկյանը խորհրդային բազմամիլիոնանոց երկրի բանաստեղծն էր, այդ երկրի յուրաքանչյուր ժողովուրդ նրա հանդեպ պաշտամունքի հասնող սեր էր տածում: Նա նախ և առաջ հայ բանաստեղծուհի էր, որը մտահոգված էր իր երկրի հոգսերով...

Բամաստեղծուհին այսօր էլ ներկա է իր պատգամներով՝ մեր ժողովրդին բազում փորձություններից հետ պահելու իր մայրական զգացողությամբ»:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանն իր ելույթում արժևորեց բանաստեղծուհու գրական աշխարհը՝ անդրադառնալով նրա պոեզիային բնորոշ ազգային նկարագրի շեշտվածությանն ու քաղաքական խիզախությանը:

Պրոֆեսոր Ա. Դոլուխանյանն իր ներածական խոսքում ընդգծեց. «Նա հզոր տաղանդի տեր գրող, եզակի հրապարակախոս, հասարակական գործիչ էր, չափազանցություն չի լինի եթե ասենք, որ նա 20-րդ դարի ամենանշանավոր հայ բանաստեղծուհին է»:

Ներկայացնելով Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են և հայ միջնադարյան ուղեգրությունները» խորագրով զեկուցումը՝ պրոֆեսորն ասաց. «Բանաստեղծուհին ուղեգրության էջերից շարունակ պատգամում է լինել աշխատասեր, ձգտել ընդօրինակել ուրիշ ազգերի լավագույն գծերը՝ միաժամանակ մնալ խորապես ազգային»:

Խոսելով Սիլվա Կապուտիկյանի անհատականության մասին՝ Ա. Եղիազարյանն ընդգծեց, որ «բանաստեղծուհին 20-րդ դարի ժողովրդի ծոցից ելած ամենավառ անհատականությունն է, հենց նա է հեղինակը կանացի հոգեբանության մասին գրված լավագույն երգերի»:

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների հոդվածները վերաբերում էին բանաստեղծուհու սիրային քնարերգության կապին միջնադարյան քնարերգության հետ, դպրոցական ծրագրերում Ս. Կապուտիկյանի պոեզիային, մանկագրության դաստիարակչական արժեքին, հրապարակախոսության առանձնահատկություններին ու հասարակական հնչեղությանը:

«Սիլվա Կապուտիկյանի մանկավարժական ու բարոյական դասերը» հոդվածների հոբելյանական ժողովածուն ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսները նվիրել են հայ մեծ բանաստեղծուհու և մեծ հայրենասերի 100-ամյակին:

Սիլվա Կապուտիկյանի 100-ամյակին նվիրված միջոցառումների մեկնարկը տրված է՝ վստահեցրին գիտական նստաշրջանի մասնակիցները, սկիզբ, որի շարունակականության մեջ արժանին պիտի մատուցվի 20-րդ դարի մեծագույն բանաստեղծուհուն:

# «Մաթեմատիկական կրթություն». միջազգային գիտաժողով Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում «Մաթեմատիկական կրթություն» խորագրով միջազգային ամենամյա գիտաժողովները շարունակական բնույթ են կրում: Հոկտեմբերի 10-12-ը կազմակերպված հերթական գիտաժողովը յոթերորդն էր: Այն կազմակերպվել էր ՀՀ Գիտության կոմիտեի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Պերմի պետական ազգային «Սոլիկամսկի» պետական մանկավարժական ինստիտուտի, Սարատովի Ն. Չեռնիշևսկու անվան պետական ազգային հետազոտական, Պենզայի պետական, Չերկասի Բ. Խմելնիցկու անվան ազգային համալսարանների հետ համատեղ:

Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ գիտաժողովի հանդիսավոր բացումը:

Պրոֆեսոր Համլետ Միքայելյանի ներածական խոսքում ընդգծված մտահոգություն կար մեր կրթության վաղվա օրվա, մարդկային կարևորագույն արժեքները երեխաներին չհասցնելու, կրթությունն ըստ այդ արժեքների կազմակերպել չկարողանալու և նման այլ հարցերի շուրջ:

«Կարողանո՞ւմ ենք այնպես անել, որ ձևավորենք այդ արժեքները երեխաների մեջ». հարցը կարևոր և ավելի քան մտահոգիչ է...

Ահա այս խնդիրների քննարկմանն էր միտված գիտաժողովը, որին մասնակցում էին Արցախից, Սանկտ Պետերբուրգից և այլ տեղերից հրավիրված գործընկերները (մի մասը, ինչպես ընդունված է, օնլայն տարբերակով), Մանկավարժական համալսարանի դասախոսները և ուսանողները:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը, որն իր խոսքում հատկապես կարևորեց ուսանողների մասնագիտական զարգացումը նման գիտաժողովների համատեքստում, և մաղթեց, որ մասնագիտական հաղորդակցման պահանջմունքը հիմք հանդիսանա հետագա զարգացումների համար:

Ակադեմիկոս Գևորգ Բաղդասարյանի կարծիքով «անկախ մեզնից, մեր վերաբերմունքը մի քիչ փոխվել է գիտության նկատմամբ»: Նա ներկաներին վստահեցրեց՝ առանց գիտելիքի և գիտության չի կարող լինել մանկավարժություն, իսկ առանց սիրո չես կարող հասնել հաջողության:

Ելույթ ունեցավ Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարանի դասախոս Օլգա Ալեքսանդրի Իվաշովան: Նա երազում էր լինել Երևանում և ահա հնարավորություն

ընձեռվեց իրականացնել երազանքը, հանդիպել գործընկերների հետ: Նա խոսեց երկու համալսարանների միջև սերտ կապերի մասին, կարևորեց մաթեմատիկայի կապը մշակույթի հետ, որն իրեն օգնում է Մանկության ինստիտուտում աշխատելիս:

Հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանը: Նրա զեկուցումը վերաբերում էր դպրոցական մաթեմատիկայի խոսքի մշակույթին: Առանց խոսքի, առանց հաղորդակցման անհնար է կրթությունն իրականացնել, և այդ համատեքստում պրոֆեսորն անդրադարձավ մաթեմատիկական խոսքի, դպրոցականի մաթեմատիկական խոսքի, դպրոցականի մաթեմատիկական խոսքի մշակույթի մակարդակների, մաթեմատիկայի ուսուցչի խոսքի և դպրոցական դասագրքերի խոսքի մշակույթների պարզաբանմանն ու բացահայտմանը:

Մաթեմատիկայի հանդեպ նվազող հետաքրքրության և մաթեմատիկայի դասավանդման ժամանակակից խնդիրների մասին խոսեց մանկավարժական գիտությունների դոկտոր Մանուկ Մկրտչյանը, իսկ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Հովհաննիսյանը ներկայացրեց ժամանակակից մաթեմատիկայի առաքելության մեջ ֆիզիկոսների և լիրիկների վեճի լուծման ուղիներին վերաբերող զեկուցում:

Գիտաժողովը շարունակվեց հանձնաժողովներում, ուր քննարկվեցին մաթեմատիկական կրթության արդի հիմնախնդիրներ:

Գիտաժողովը միտված է նպաստելու մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրությունների բարձրացմանը և առարկայի ժամանակակից խնդիրների հանգուցալուծումների բացահայտմանը:

***Սիլվա ԱՍՐՅԱՆ***

# Պրակտիկայի բարելավման գործընթացում

Կայացավ ՀՊՄՀ-ի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հանդիպումը բուհի ամբիոնների վարիչների հետ: Ավանդական դարձած աշխատանքային հանդիպման օրակարգային առաջին հարցը բակալավրիատի ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի արդյունավետության վերլուծության վերաբերյալ էր:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանն իր զեկույցում առանձնացրեց այն բացթողումներն ու թերությունները, որոնք տեղ են գտել այս ուսումնական տարում ամբիոնների կողմից ներկայացված թեմաներում: Պրոռեկտորը խոսեց կրթական երկու աստիճանների ավարտական աշխատանքների առանձնահատկությունների մասին և նկատեց՝ թեև տարեցտարի դրանց որակը բարելավվում է, բայց պետք է նկատի ունենանք այլ դիտարկումներ ևս՝ առավել որակյալ աշխատանքներ ունենալու համար:

Կրկնվող թեմաներ, խորագրերի ոչ կոնկրետ և լայն շրջանակ, տեսական ուղղվածություն և այլն. սրանք հաճախ հանդիպող այն թերություններն են, որոնք տեղ են գտել 2019-2020 ուսումնական տարվա՝ ամբիոնների ներկայացրած ավարտական աշխատանքների թեմաներում:

«Կրկնվող թեմաները մղում են արտագրության, թեմայի լայն շրջանակը խոչընդոտում է, որ ուսանողը հետազոտություն կատարի իր մասնագիտության շրջանակներում, իսկ շատ հաճախ էլ թեմաները չեն ներկայացնում տվյալ ամբիոնի ներկայացրած մասնագիտությունը: Ավարտական աշխատանքները նպատակ ունեն ստուգելու ուսանողների գիտելիքները մասնագիտության շրջանակներում՝ զարգացնելով նրանց հետազոտական ունակությունները»,-նշեց պրոռեկտոր Գևորգյանն ու ևս մեկ անգամ ընդգծեց՝ աշխատանքներում պետք է շեշտադրել նորույթը դպրոցի, կրթական նպատակների իրականացման տեսանկյունից:

Պրոռեկտորը ամբիոնների վարիչներին հորդորեց ուսանողներին առաջարկել թեմաներ նաև կոնկրետ բուհի հիմնախնդիրների վերաբերյալ, հնարավորություն ստեղծել լավագույն աշխատանքների տպագրման համար, իսկ լավագույն հետազոտողներին խրախուսել՝ գիտական առաջընթաց ունենալու համար: Սրբուհի Գևորգյանը հույս հայտնեց, որ ավարտական աշխատանքների արդյունավետության վերաբերյալ մշակվող կարգերի նախագծերի շուրջ ամբիոնների վարիչները կներկայացնեն առաջարկներ, դիտարկումներ ու լրացումներ՝ առավել որակյալ աշխատանքներ ունենալու նպատակով:

«Կրթական բարձր մակարդակի և որակի հասնելու համար պետք է այս հարցում ևս ցուցաբերենք հստակ մոտեցումներ: Թեմաները պետք է լինեն պարզ, չկրկնվեն՝ բացառելու համար արտագրությունը, իսկ ամենակարևորը՝ կատարվեն ինքնուրույն»,-նշեց ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն ու ամբիոնների վարիչներին հորդորեց գումարել նիստեր և աշխատանքների գիտական ղեկավարների հետ դեռ ուսումնական տարեսկզբին քննարկել այն պահանջները, որ հետապնդում է բուհը ավարտական աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ամբիոնների վարիչների հետ աշխատանքային հանդիպմանը Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանն էլ խոսեց մանկավարժական պրակտիկայի արդյունավետության վերլուծության մասին և ընդգծեց, որ ուսանողների հետ ամբիոնների կազմակերպած հանդիպումներում պետք է հավաքագրել և քննարկել պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվությունը:

«Բուհի հավատարմագրման գործընթացում միջազգային փորձագետները խնդիր են տեսնում պրակտիկայի և տեսության կապի միջև. պետք է վերանայվեն ուսումնական վերջնարդյունքները»,-նշեց Վահան Սարգսյանն ու հավելեց, որ առայժմ լիարժեք չի գործում նաև ուսանող-մեթոդիստ-մանկավարժ կապը: Պրակտիկայի կենտրոնի ղեկավարը խոսեց նաև վերջերս պրակտիկա անցկացնող դպրոցների տնօրենների հետ հանդիպման մանրամասների, արդյունքների մասին և տեղեկացրեց, որ այսուհետ պրակտիկա իրականացնող հաստատությունների ներկայացուցիչները կներգրավվեն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում և կմասնակցեն բուհում կազմակերպվող գիտաժողովներին և այլ ձեռնարկներին:

Պրակտիկայի բարելավման գործընթացում Վ. Սարգսյանն առանձնացրեց պրակտիկայի գնահատման առանցքային ցուցիչի փոփոխման ու առարկաների պլանավորման վերանայման անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա իրականացնել պրակտիկայի բարելավման ևս մեկ շրջափուլ:

Կարևորելով մանկավարժական պրակտիկայի արդյունավետության բարձրացումը՝ ռեկտորը նկատեց, որ պրակտիկան պետք է հիմք հանդիսանա ուսանողների կարիերայի հետագա շարունակության: Ռուբեն Միրզախանյանը հավելեց նաև, որ պրակտիկայի գործընթացին վերաբերող ուսումնասիրությունները ևս կարող են լինել մագիստրոսական թեզի թեմաներ՝ նպաստելով գործընթացի կատարելագործմանը:

**Ք. ՄԵԼՔՈՆՅԱՆ**

# «100 գաղափար Հայաստանի համար»

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Գևորգ Լոռեցյանը հոկտեմբերի 16-ին Մանկավարժական համալսարանում հանդիպեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների հետ: Փոխնախարարը ներկայացրեց նախարարության «100 գաղափար Հայաստանի համար» ծրագիրը՝ հորդորելով ուսանողներին նորարարական գաղափարներով ու նախաձեռնություններով մասնակցել ծրագրին:

Նախարարի տեղակալը ուսանողներին ներկայացրեց մրցույթի էությունն ու նպատակը: Այն արդեն չորրորդ տարին է անցկացվում հանրապետությունում, կարող են մասնակցել 16-35 տարեկան նորարարական գաղափարներ ունեցող երիտասարդները: Ծրագիրն ունի տարբեր ուղղություններ, այդ թվում՝ մանկավարժություն և սոցիոլոգիա: Հատկապես այդ երկու ուղղությունները կհետաքրքրեն Մանկավարժական համալսարանի ուսանողներին՝ կարծում է նախարարի տեղակալը և հավելում, որ մեկ հնարավորությունն ստեղծում է նոր հնարավորություններ, և որ սա առաջին քայլն է դեպի ձեռնարկատիրություն: Գ. Լոռեցյանը վստահեցնում է, որ երիտասարդների նորարարական գաղափարներն անպայման աջակցություն կստանան, որ այդ քայլն անելով գուցե շատերը կդառնան ոլորտի առաջավորներ:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՊՄՀ պրոռեկտորներ Սրբուհի Գևորգյանը և Արմեն Թամազյանը:

Ամեն շահույթ հետապնդող անձ դեռևս ձեռներեց չէ՝ ասում է պրոռեկտոր Թամազյանը՝ հավելելով, որ ձեռներեցին նորարարությունը հրճվանք է պարգևում:

«Ապագայում միգուցե ձեր մասնագիտությամբ չաշխատեք, բայց պիտի կարողանաք տարիների ընթացքում ստացած գիտելիքներն ու կարողությունները համադրել ձեր կատարած աշխատանքին,-ասում է մասնագիտությամբ տնտեսագետ Գ. Լոռեցյանը, հավելելով, որ այդ ճանապարհին միշտ փորձություններ ու թակարդներ կհանդիպեն, պետք է հաղթահարել դրանք՝ օգտագործելով ձեռք բերած գիտելիքները և ճիշտ ժամանակին ճիշտ գիտելիք օգտագործել հաջողության հասնելու համար:-Սա ծրագիր է երիտասարդների համար, որտեղ կարող են կենտրոնացնել իրենց ներուժը, նորարարական գաղափարները՝ հետագայում դրանք տարբեր ոլորտներում ներդնելու և զարգացնելու համար: Ամեն ինչ սկսվում է գաղափարներից, միայն թե դրանք պետք է կյանքի կոչել»:

Ուսանողների համար ցուցադրվեց մրցույթին վերաբերող փոքրիկ տեսահոլովակ, այնուհետև հանդիպումը շարունակվեց երկխոսության ձևաչափով: Երիտասարդներն իրենց նորարարական գաղափարները պետք է ներկայացնեն մինչև հոկտեմբերի 22-ը: Հատուկ ստեղծված հանձնաժողովը դրանցից կընտրի ամենալավ 20 գաղափարները, որոնց մասին հեռուստատեսությամբ տեսահոլովակներ կցուցադրվեն:

Գ. Լոռեցյանը ուսանողներին տեղեկացրեց, որ նախարարությունն ունի տարբեր դրամաշնորհային ծրագրեր, որոնց միջոցով այդ նորարարական գաղափարները հետագայում կարելի է կյանքի կոչել:

«Բոլոր դեպքերում մեզ համար հիմնական արժեքը մտածող մարդն է»,-ամփոփեց նախարարի տեղակալը՝ հույս հայտնելով, որ ապագա մանկավարժներն աչքի կընկնեն իրենց նորարարական մտքերով ու առաջարկություններով:

***Միլվա ԱՍՐՅԱՆ***

# ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻՆ

Մանկավարժական համալսարանի 5 ուսանող սեպտեմբերի 15-25-ը մասնակցեց Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարանի կազմակերպած «Աշնանային դպրոց» ծրագրին: Ուսանողներից երեքը բակալավրի կրթական ծրագրով սովորող հոգեբաններ էին, երկուսը՝ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի էրգոթերապիա և հատուկ մանկավարժ մասնագիտության մագիստրոսներ:

Ուսանողների ուսումնական և մշակութային առօրյան Մոսկվայում հագեցած էր դասախոսություններով և այցելություններով տարբեր մշակութային կենտրոններ:

Հայ ուսանողները հնարավորություն ունեցան լսելու ՀՊՄՀ գործընկեր համալսարանի առաջատար ու հայտնի հոգեբանների դասախոսությունները ոլորտի խնդրահարույց հարցերի ու գիտական նորությունների մասին, միաժամանակ ծանոթացան բուհի գործունեությանը:

«Շատ օգտակար էին հատկապես թրեյնինգներ անցկացնելու գործնական պարապմունքները»,-ասում է ծրագրի մասնակից, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի, էրգոթերապիստ Լիլիա Օսիպովան:

Ուսանողները հատկապես տպավորված են մոսկովյան համալսարանի դասախոսների՝ հոգեբանության տարբեր ոլորտներին վերաբերող դասընթացները գիտական բարձր մակարդակով մատուցելուց և ուսանողների հետ փոխգործակցության շփումներից:

Մեր ուսանողների համար կազմակերպվել են նաև այցելություններ Կրեմլի թանգարան, Հոգեբանության թանգարան, Ա. Կալյագինի ղեկավարած Մոսկվայի «Et-Cetera» թատրոն, ուսանողները Կոնսերվատորիայում ներկա են գտնվել սիմֆոնիկ համերգի:

# Բազմավաստակ բժիշկ-մանկավարժը



Լրացավ Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Մանուկի Գրիգորյանի ծննդյան 70, աշխատանքային գործունեության 45 և Մանկավարժական համալսարանում աշխատելու 40-ամյակը:

Հակոբ Գրիգորյանը ծնվել է 1949 թ. հոկտեմբերի 14-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: 1966 թ. ավարտել է Երևանի Ստ. Շահումյանի №1 դպրոցը:

Նրա աշխատանքային գործունեությունը սկսվել է ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի Ռադիոկենսաբանության բաժանմունքից, որտեղ աշխատել է որպես լաբորանտ, ապա շարունակել է աշխատել Թունաբանության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում որպես գիտական աշխատող:

1974 թվականին ավարտել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտը և իր աշխատանքային կենսագրությունը 1979 թվականից կապել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ՝ առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ամբիոնում որպես դասախոս, այնուհետև՝ ավագ դասախոս, իսկ 2001- 2015 թվականներին՝ որպես ամբիոնի վարիչ:

Միջազգային կազմակերպությունների մասնագետների հետ 1988-90 թվականներին նա մասնակցել է Գյումրիում և Սպիտակում երկրաշարժից տուժած բնակչության բժշկահոգեբանական վերականգնողական աշխատանքներին:

Հ. Գրիգորյանն այդ տարիներին համատեղությամբ աշխատել է ՀՍՍՀ Ագրարդի աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեում որպես ավագ հավատարմատար բժիշկ, Խարբերդի մանկատանը որպես բժիշկ-մանկավարժ, Երևանի № 5 հատուկ դպրոցում որպես հոգեբույժ-մանկավարժ:

Բժշկա-մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա զբաղվել է հասարակական ակտիվ աշխատանքով:

1997-2002 թթ.-ին նշանակվել է համալսարանում գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, ՀՊՄՀ գիտական խորհրդի անդամ:

Անշուշտ, կենսագրությունն ամփոփող այս թվերը սոսկ թվեր չեն. դրանք մարդկային ապրումներ են, հագեցած ամենօրյա տքնաջան աշխատանքով, նվիրումով սիրած մասնագիտության և լավատեսությամբ՝ սեփական ուժերի հանդեպ:

Հակոբ Գրիգորյանի կենսագրության էջերը թերթելիս կարելի է անկեղծորեն զարմանալ, թե նա ինչպես է կարողացել գիտաուսումնական աշխատանքը համադրել հասարակականի հետ, մանկավարժական գործունեությանը զուգահեռ աշխատել տարբեր խորհուրդներում՝ որպես ԿԳ նախարարության ԿԱԻ-ի մասնագիտական խորհրդի նախագահ, հանրային խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի անդամ, էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության ակադեմիայի (ՄԱՆԷԲ) իսկական անդամ, մանկավարժահոգեբանական գիտությունների հասարակական ակադեմիայի իսկական անդամ, հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից անդամ, «ՖԵՆԻՔՍ» բժշկամանկավարժահոգեբանական հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ, ՀՀ ԿԳ մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրենի խորհրդական, միջազգային մի քանի կազմակերպությունների (Հույս, Բժիշկներ առանց սահմանի, ֆիննական պաթմոս, Միջազգային Կարմիր խաչ և այլն) խորհրդատու:

Բազմաթիվ են նրա աշխատանքային որակավորումները՝ ինֆեկցիոնիստի, նյարդաբանի, հոգեբույժի, քաղաքաշտպանության բժշկական ծառայության մասնագիտական գլխային հիվանդանոցի՝ ՍՊԻԴ-ի գծով գլխավոր բժշկի:

Նա ունի երկու տասնյակից ավելի հավաստագրեր, հեղինակ է չորս տասնյակից ավելի ուսումնական ձեռնարկների և մենագրությունների, մի քանի տասնյակ գիտական հոդվածների, խմբագրել և գրախոսել է բազմաթիվ ուսումնական ձեռնարկներ:

Խարբերդի մանկատան աշխատողների համար Հ. Գրիգորյանն անցկացրել է սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ, մանկավարժական համալսարանի շուրջ 150 աշխատակիցների համար՝ առաջին բուժօգնությանը, արտակարգ իրավիճակներին և քաղաքացիական պաշտպանությանը նվիրված սեմինարներ ու գործնական պարապմունքներ:

Երևանի բժշկական համալսարանի տարբեր ամբիոնների առաջատար մասնագետների հետ համագործակցությամբ առաջին անգամ Հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողների համար հրատարակվել են «Նևրոպաթոլոգիա», «Երեխաների և դեռահասների հոգեախտաբանություն», «Օլիգոֆրենիայի կլինիկա» ձեռնարկները: Վերջերս էլ պրոֆեսոր Ալեքսանդր Մալայանի և Ռոբերտ Ազարյանի հետ համահեղինակությամբ հրատարակվել է «Տեսողության օրգանի անատոմիա, ֆիզիոլոգիա և պաթոլոգիա» ստվարածավալ ձեռնարկը: Առաջիկայում բժշկական համալսարանի մասնագետների հետ համահեղինակությամբ կտպագրվի «Մարդու ֆիզիոլոգիա» և «Լսողության ու խոսքի օրգանների անատոմիա, ֆիզիոլոգիա և պաթոլոգիա» դասագրքերը:

Ծննդյան 70 ամյակի և աշխատանքային գործունեության 45-ամյակի կապակցությամբ շնորհավորելով Հակոբ Գրիգորյանին՝ մաղթում ենք նրան բեղմնավոր և ստեղծագործական աշխատանք, նորանոր հաջողություններ, առողջություն և անձնական երջանկություն:

# ԾԱՆՈԹԱՑԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅԱՆԸ



Մանկավարժական համալսարանում հոկտեմբերի 14-15-ը անցկացվեց «Սովորողների խոսքի պրոֆիլային վերլուծություն» (գերմաներենը որպես օտար լեզու) թեմայով երկօրյա միջազգային գիտաժողով: Այն կազմակերպել էին Երևանի Գերմանական ուսումնամշակութային կենտրոնը և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ Հայաստանում ԳԴՀ դեսպանության աջակցությամբ:

Գիտաժողովին հրավիրվել էին Երևան քաղաքի, Արմավիրի, Գեղարքունիքի և այլ մարզերի գերմաներենի ուսուցիչներ, բուհերի և քոլեջների գերմաներենի դասախոսներ:

Գիտաժողովի հյուրը և գլխավոր զեկուցողը պրոֆեսոր Վիլհելմ Գրիսհաբերին էր (Գերմանիա, Մյունստեր):

Գիտաժողովի բացմանը ելույթ ունեցավ համալսարանի գիտաուսումնական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա բուհի ղեկավարության անունից ողջունեց մասնակիցներին և հյուրերին, կարևորեց գիտաժողովի անցկացումը, վստահեցնելով, որ այն առավել կզարգացնի և նոր, մակարդակի կբարձրացնի ուսանողների, մագիստրոսների հմտություններն ու կարողությունները:

Պրոռեկտորը աշխատաժողովի մասնակիցներին մաղթեց հաջողություն և արդյունավետ երկխոսություն:

Պրոֆեսոր Վիլհելմ Գրիսհաբերին երկրորդ անգամ է Հայաստանում, նախկինում ևս մասնակցել է նման գիտաժողովի: Նա ներկայացրեց մի մեթոդ (հեղինակներից մեկն է ինքը), որը կոչվում է «Սովորողների խոսքի պրոֆիլային վերլուծություն»: Մեթոդը կիրառվել է շատերի կողմից, բայց Հայաստանում առաջին անգամ է կիրառվելու: Սովորողներին նախապես տրվել են բաժանվել տեքստային առաջադրանքներ, որոնց արդյունքները ուղարկել են գերմանացի պրոֆեսորին:

Պրոֆեսորն ուրախությամբ գնահատեց այն փաստը, թե ինչպես են հայ աշակերտները գերմաներեն սովորում, նաև լիահույս է՝ երկօրյա աշխատանքների ընթացքում կկարողանան ծանոթանալ մեթոդի էությանը, կիրառել այն ու հետևություններ անել:

Մելանյա Աստվածատրյանը կարևորեց գիտաժողովը՝ մեկնաբանելով ներկայացվելիք մեթոդի էությունը. «Մեթոդները բազմաթիվ են, իսկ այս մեթոդի շրջանակներում ներկայացվում է, թե ինչպես է տեղի ունենում դասի պլանավորումը, ինչ ունակություններ կարող ենք ձեռք բերել և ինչ հետևություններ անել: Գրիսհաբերին տալիս է մի գործիք, որի միջոցով ուսուցիչները կկարողանան չափել գիտելիքի մակարդակը: Ի՞նչ է ուսումնական գործընթացը՝ շարժառիթ, գործունեության իրականացում, գնահատում: Այս գիտաժողովը առավել կարևորվում է գնահատման բաղադրիչին անդրադառնալու ձևաչափով»:

Գիտաժողովին մասնակցում էր նաև Հոլգեր Շմիդտը: Հինգ տարի է՝ նա Հայաստանում է, «Գերմաներենը արտասահմանյան դպրոցների բարելավման համար» ծրագրով աշխատում է տարբեր դպրոցներում և քոլեջներում, որտեղ մշտապես իրականացրել է լեզվի վերլուծություն: Նա կարծում է, որ գիտաժողովին մասնակցությունը, նոր մեթոդի կիրառումը նոր հնարավորություններ կընձեռի գերմաներենի դասավանդման ոլորտում:

Երկօրյա գիտաժողովը գերմաներենի ուսուցիչների համար գնահատման նոր մոտեցումների հնարավորություն կընձեռի՝ շատերի համար բացահայտելով նաև լեզվի իմացության և գնահատման, խոսքի պրոֆիլային վերլուծության նրբությունները:

*Սիլվա ԱՍՐՅԱՆ*

# Ուսանողները մասնակցեցին Ավստրիայում կայացած գիտաժողովին

Մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի «Լանդշաֆտային պլանավորում» բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողներ Էլյա Հարությունյանը և Մարիամ Ավետիսյանը, մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Լիլի Մարգարյանը, աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աշոտ Խոյեցյանի, դասախոսներ Մ. Մաթոսյանի և Ս. Խաչատրյանի ղեկավարությամբ մեկնեցին Ավստիրա՝ մասնակցելու ISCONTOUR 2019 միջազգային ուսանողական գիտաժողովին:

Լանդշաֆտային պլանավորման բաժնի ուսանողները նախապես ներկայացրել էին իրենց գիտական հոդվածները, որոնք և ներկայացրին Ավստրիայի Ինսբրուկ քաղաքում (MCI Management Center Innsbruck-ում), մայիսի 13-14-ը կայացած միջազգային ուսանողական գիտաժողովում: Գիտաժողովը լուսաբանում էր զբոսաշրջության հետազոտություններ:

Էլյա Հարությունյանի հետազոտական թեման էր՝ «ՀՀ Օշական համայնքի ռեսուրսների ռեկրեացիոն գնահատումը կայուն տուրիզմի համատեքստում». կատարվել է Օշական համայնքի բնական պայմանների և պատմամշակութային հուշարձանների ռեկրեացիոն ներուժի արժևորում, մշակվել և առաջարկվել են դրանց նպատակային ու արդյունավետ օգտագործման և պահպանման ուղիներ՝ համայնքը ռեկրեացիոն տարածքի վերածելու նպատակով:

Մարիամ Ավետիսյանի թեման էր «Հայաստանի Հանրապետության Ջերմուկ քաղաքի հյուրանոցային տնտեսության առանձնահատկությունները». վերլուծվել է Ջերմուկ քաղաքի հյուրանոցային տնտեսության համակարգը:

Լիլի Մարգարյանի հետազոտական թեման՝ «Արկածային զբոսաշրջությունը Մարմարիկ գետի հովտում որպես աղքատության հաղթահարման ուղի», ի տարբերություն վերը նշվածների՝ ընդգրկում էր նաև 2018 թվականի ամռանը APPEAR միջազգային գիտակրթական ծրագրի շրջանակում Մարմարիկ գետի հովտում իրականացված միջդիսցիպլինար հետազոտությունների իր կողմից կատարված վերլուծությունները: Հետազոտության արդյունքում տվյալ տարածքում թե զբոսաշրջության, թե տնտեսության զարգացմանն ուղղված գործնական ուղիներ առաջարկվեց:

Գիտաժողովին մասնակցում էին տարբեր երկրներից եկած ուսանողներ, որոնք ներկայացնում էին իրենց երկրների տարածքում կատարված համանման հետազոտություններ:

Աշխարհագրության ամբիոնի լանդշաֆտային պլանավորման բաժնի մագիստրոսների մասնակցությունը գիտաժողովին ևս մեկ էր գիտական ուսումնասիրությունների մակարդակի և բուհում աշխարհագրության դասընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

# Հոկտեմբերի 7-ը գրադարանավարի օրն է

Գրադարանավարի օրը լավ առիթ է ևս մեկ անգամ անդրադառնալու գրքի արժեքին և գրադարանավարի գործի կարևորությանը: Տոնի խորհուրդը գրքի և գրադարանի արժևորումն է: Չնայած մեր օրերում համացանցի և տեխնիկայի զարգացմանը՝ գիրքն իր ուրույն տեղ ունի մեր կյանքում, այն անփոխարինելի է, և հենց գրադարանավարն է կապ ստեղծում գրքի և ընթերցողի միջև: Այս աշխատանքը կարևոր է հասարակության համար, իսկ ազդեցությունը՝ անգնահատելի:

Օրվա խորհրդով ուզում եմ ներկայացնել հետաքրքիր փաստեր գրադարանների մասին:

***

Ալեքսանդրիայի գրադարանը՝ անտիկ ժամանակաշրջանի մեծագույն գրադարաններից մեկը, գործել է Ալեքսանդրիայի մուսեյոնին՝ հելլենիստական գիտության կենտրոնին կից: Հիմնադրվել է մ.թ.ա 3-րդ դարում Պտղոմեոս II Եղբայրասերի իշխանության տարիներին: Գրադարանում պահվել են ենթադրաբար 400 հազարից 700 հազար պապիրուսի գալարների վրա գրված ձեռագրեր: Գրադարանում աշխատել են հելլենիստական դարաշրջանի նշանավոր գիտնականներ, այդ թվում՝ Եվկլիդեսը: Մ.թ.ա. 48 - 47 թթ. Հուլիոս Կեսարի կողմից Եգիպտոսում վարած ռազմական գործողությունների ընթացքում գրադարանում հրդեհ է բռնկվել, որի հետևանքով գրքերի մի մասը ոչնչացել է: Հետագայում գրադարանի շենքը վերականգնվում է, և Մարկոս Անտոնիոսը վերականգնում է նրա գրքային ֆոնդը հելլենիստական աշխարհի մեկ այլ խոշոր գրքային հավաքածուի՝ Պերգամոնի գրադարանի հաշվին: Հետագա դարերի ընթացքում գրադարանը մի քանի անգամ ենթարկվում է հրդեհների, որոնց հետևանքով նրա գրքային ֆոնդը հետզհետե նվազում է:

***

Աշխարհում ամենահին գրադարանը հայտնաբերվել է 1849-1851 թվականներին՝ բրիտանացի հնէաբան Օսթին Հենրի Լեյարդի և Հորմուզ Ռասամի կողմից՝ Եփրատի ափին անցկացված պեղումների ժամանակ: Սա համարվում է գիտությանը հայտնի բոլոր ժամանակների ու ազգերի հնագույն գրադարանը: Աշուրբանապալը ցանկացել էր ստեղծել մի վայր, ուր կհավաքվեր մարդկության բոլոր գիտելիքները: Հավաքածուն հիմնականում ներառում է շումերական և բաբելոնյան տեքստեր: Գրադարանն ունի շատ հարուստ հավաքածու, որի մեջ ընդգրկված են իրավաբանական, ադմինիստրատիվ, կառավարչական գրառումներ, քաղաքական իրադարձությունների նկարագրությունների, կախարդությունների և կրոնական ծեսերի բութագրեր, երգեր և աղոթքներ: Գրադարանի ամենահայտնի նմուշներից մեկը Գիլգամեշի մասին էպոսն է, որը համարվում է Միջագետքի անտիկ մշակույթի և պատմության հիմնական աղբյուրը: Այն նաև հնարավոր է դարձրել սեպագրերի ապակոդավորումը: Այս գրադարանում հայտնաբերված 30 հազար կավե սալիկների մեծ մասը պահպանվում է Բրիտանական թանգարանում:

***

Աշխարհի ամենախոշոր գրադարանը Կոնգրեսի գրադարանն է, որն իր հավաքածուներում ունի ավելի քան 150 միլիոն օրինակ: Այն հիմնադրվել է 1800 թվականին ԱՄՆ նախագահ Ջոն Ադամսի կողմից, որը հայտնի գրքամոլ էր: Սկզբնական շրջանում սահմանված գործառույթների համաձայն՝ գրադարանից կարող էին օգտվել միայն նախագահը, փոխնախագահը, Սենատի և Ներկայացուցիչների պալատի (Կոնգրես) անդամներ: Այդ պատճառով գրադարանն անվանվեց Կոնգրեսի գրադարան: Գրադարանի նախնական ֆոնդն ուներ 740 գիրք և Ամերիկան ներկայացնող աշխարհագրական 3 քարտեզ՝ գնված Լոնդոնում: Հաջորդ նախագահը՝ Թոմաս Ջեֆերսոնը, սկսեց լրջորեն զբաղվել գրադարանի ֆոնդով, դերով և նշանակությամբ: Նրա օրոք գրադարանի ֆոնդը զգալիորեն արագ մեծացավ: Ամեն օր գրադարան են այցելում 1,7 միլիոն ընթերցողներ: Աշխարհի խոշորագույն գրադարանը բաժանված է 18 ընթերցասրահի, որտեղ տեղավորվում են 1460 մարդ: Գրադարանում այժմ կա ավելի քան 47 հազար միավոր հայերեն գրականություն, որի պատասխանատուն պատմաբան Լևոն Ավդոյանն է:

***

Haskell- ի գրադարանը գտնվում է աշխարհի միանգամից երկու երկրներում՝ ԱՄՆ-ում և Կանադայում: Այսինքն՝ շենքի մեկ կեսը գտնվում է ամերիկյան Դերբի-Լայն քաղաքում, մյուսը՝ Կանադայի Սթենստեդում: Սակայն գրադարան կարելի է մուտք գործել միայն ԱՄՆ-ից, չնայած, կանադացիները նույնպես ազատ կարող են օգտվել գրադարանից: Սեպտեմբերի 11-ի հարձակումներից հետո անվտանգության միջոցները խստացվեցին, և ԱՄՆ Ազգային անվտանգության աշխատակիցները մշտապես հերթապահում են շենքում:

***

Չինաստանի Բինհայ մշակութային շրջանում զարմանալի գրադարան են կառուցել, որն անվանվել է «Բինհայի աչք»: Գրադարանը 5 հարկ ունի, իսկ մեջտեղում մեծ ընթերցասրահն է, որը նման է հսկայական աչքի: Շենքը նախագծել է տեղի ամենահայտնի դիզայներական ստուդիաներից մեկը, որը մոդեռն գրադարաններ կառուցելու մեծ փորձ ունի: Գրադարանի տարածքը 34 հազար քառակուսի մետր է, այդտեղ պահպանվում է 1,2 մլն գիրք: Բացառիկ ճարտարապետությամբ աչքի ընկնող գրադարանում կա 1,2 մլն գիրք: Գրադարանի առաջին և երկրորդ հարկերում գտնվում էին ընթերցասրահը և հանգստի գոտին, վերևի հարկերում՝ կոնֆերանս դահլիճները, գրասենյակները, համակարգչային և աուդիո սենյակները: Իսկ գրադարանի ստորգետնյա հարկում կա գրքերի պահեստ և հսկայական արխիվ:

***

Այս տարի Ֆինլանդիայի կենտրոնական գրադարանը՝ Oodi-ն, որը բացվել է 2018 թվականին, Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային ֆեդերացիայի (IFLA) կողմից լավագույնն է ճանաչվել ողջ աշխարհում: Oodi գրադարանն իր ճարտարապետության շնորհիվ կարճ ժամանակում դարձել է Ֆինլանդիայի այցեքարտերից մեկը: Գրադարանում կան ռոբոտներ, որոնք գրապահարանի գրքերը փոխանցում են ընթերցողներին, կան նա 3D տպիչներ, ձայնագրման ստուդիա և այլն: Միայն այս տարի Oodi գրադարան է այցելել 2 մլն մարդ:

***

Գրադարանավարի օրվան ընդառաջ Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի կոլեկտիվը ճանաչողական այց կատարեց Օշական: Գրադարանավարները խորին հուզմունքով գլուխ խոնարհեցին մեծ հայի, հայ ժողովրդի ինքնության, հայոց գրերի վերականգնող Մեսրոպ Մաշտոցի շիրմին: Եկեղեցու շրջակայքում գրադարանավարները պտույտ կատարեցին հայոց տառ-խաչքարերի պուրակում:

***Աննա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ***
***Գիտական գրադարանի ընթերցասրահների բաժնի պետ***

# ԵՐԲ ԼՌՈՒԹՅՈՒՆՆ Է ԽՈՍՈՒՄ...

1951թվականից ի վեր սեպտեմբերյան վերջին կիրակին նշվում է որպես լսողության խանգարումներ ունեցող անձանց միջազգային օր, իսկ այդ շաբաթվա ողջ ընթացքում կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ աշխարհի տարբեր երկրներում:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան սեպտեմբերի 23-ը հռչակել է ժեստերի լեզուների միջազգային օր՝ բարձրացնելու ժեստերի լեզուների և չլսող անձանց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակը:

ՀՊՄՀ-ն բուհական համակարգում միակն է, որն ունի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ, հետևաբար ֆակուլտետը չէր կարող անմասն մնալ կազմակերպվող միջոցառումների շարքից:

Միջոցառմանը հրավիրված էին «Արաբկիր» բժշկական համալիրի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի սուրդոլոգիական ծառայության ղեկավար, սուրդոլոգ Թամարա Մանուկյանը, «Հավատ» հասարակական կազմակերպության «Ծնողական օնլայն դպրոցի» ղեկավար Կարինե Հարությունյանը, «Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոնի» խոսքի ավագ թերապևտ Սաիդա Հարությունյանը, ինչպես նաև կենտրոնի լսողության խանգարում ունեցող փոքրիկները, ՀՀ «Դյուցազնագիրք» գրքի ռեկորդակիր Կարինե Զաքարյանը, Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի տնօրեն, հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոս մ.գ.թ. Լուսինե Բաբայանը, ինչպես նաև կրթահամալիրի սաները:

Միջոցառման ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, ինչպես նաև ուսանողները և հյուրերն իրենց զեկուցումներում ներկայացրին մի շարք կարևոր և արդիական հարցեր՝ կապված լսողության խանգարման հիմնախնդրի հետ:

Միջոցառման մասնակիցներն իրենց ելույթներով ցույց տվեցին, որ «լռությունը ևս ձայն ունի, որ լռությունը խոսուն է, և երբեմն բառերը կարող են իրենց տեղը զիջել խոսուն լռությանը»:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 18.10. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ